# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N27

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.03.2020ԹՎԱԿԱՆԻ N4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Փարպի համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ավագանու 12.03.2020թ.-ի N4 նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման համար համայնքի կողմից 10% համաֆինանսավորման և Փարպի համայնքի ավագանու 03.03.2020թ.-ի N23 <<Փարպի համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման համար համայնքի կողմից 10%համաֆինանսավորման մասին >>որոշումը անվավեր ճանաչելու մասին.

2.Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի <<Համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտ-բետոնե ծածկույթի հիմնանորոգում>> և <<Համայնքի փողոցների արտաքին լուսավորության աշխատանքների իրականացում>> սուբվենցիայի հայտերին համաձայնություն տալու մասին.

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին.

4.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 28

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՏՆՏԵՍԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 10% ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.03.2020Թ.-Ի N23 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 2-րդ կետի և 90-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի կազմած թերությունների ակտը.

Փարպի համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ իր համաձայնությունը՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի կողմից Փարպի համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի 2200 մ հատվածի վերականգնման նպատակով ներդրված 83085000 դրամ գումարից, Փարպի համայնքի կողմից 10% համաֆինանսավորմանը՝ 8308500 (ութ միլիոն երեք հարյուր ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.Անվավեր ճանաչել Փարպի համայնքի ավագանու 03.03.2020թ.-ի N23 <<ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ներտնտեսային ոռոգման համակարգի վերականգնման համար համայնքի կողմից 10% համաֆինանսավորման մասին>> որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 29

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏ_ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ>> ԵՎ <<ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ>> ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03.03.2020 ԹՎԱԿԱՆԻ N22 <<ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգի դրույթներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով

Փարպի համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված <<համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտ-բետոնե ծածկույթի հիմնանորոգում>> և <<համայնքի փողոցների

արտաքին լուսավորության աշխատանքների իրականացում>> (այսուհետ՝ ծրագրեր) սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել որ՛

1) Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:

2)Ծրագրերի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

3.Անվավեր ճանաչել Փարպի համայնքի ավագանու 03.03.2020 թ-ի N22 որոշումը.

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020թվականի N 30

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումների բաշխման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը

Փարպի համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Փարպի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում համայնքի ղեկավարի առաջարկաց փոփոխությունները՝ համաձայն 1,2,3 և 6 հատվածների:

2.Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման 08.1.1 (հանգստի և սպորտի ծառայություններ) ծրագրի

4111 (աշխատավարձ) հոդվածից -100000 դրամ

4262 (գյուղատնտեսական ապրանքներ) հոդվածից-400000դրամ

4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից-100000 դրամ

08.4.3 (կրոնական և հասարակական այլ) ծրագրի

4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածից -400000դրամ

Պետության կողմից տրված այլ դոտացիա (տեղական ինքնակառավարման մարմիններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումներ) - 3216000 դրամ

Հատկացնել 04.2.4 (ոռոգում) ծրագրի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 31

### ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 31-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 04.03.2020թ.-ի թիվ 33 դրական եզրակացությունը.

Փարպի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ իր համաձայնությունը Փարպի համայնքի վարչական սահմանում գտնվող, Սմբատ Վահրամի Առաքելյանի սեփականությանը պատկանող՝ 0138-0074 ծածկագրով 0,8404 հա գյուղատնտեսական նշանակության տարածքից առանձնացված 0,2000 հա, որից 0,0827 հա վարելահող, 0,1173 հա խոտհարք՝ նպատակային նշանակությունները փոխադրելու բնակավայրի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի մասնագետին հաշվարկել հողամասերի համար քաղաքացիների կողմից օրենքով սահմանված վճարվելիք գումարի չափը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ԿԱՐՈ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ